ՌՈՒԲԵՆԸ

Վլադիսլավ Գասումյանով
Ալինա Գասումյանովա

ՌՈՒԲԵՆԸ

Գիրք-կոչ՝ արդարության և հանուն Ռուբեն Վարդանյան Մարդու ազատության

Թարգմանությունը ռուսերենից՝
Նարինե Կռոյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 929:658
ԳՄԴ 65.29
Գ 310

Գ 310 Գասումյանով Վլադիսլավ, Գասումյանովա Ալինա
Ռուբենը: Գիրք-կոչ՝ արդարության և հանուն Ռուբեն Վարդանյան Մարդու ազատության / Վ. Գասումյանով, Ա. Գասումյանովա.- Եր.: Newmag, 2024.- 152 էջ:

Բիզնեսի, գիտության, արվեստի ռուս և հայ գործիչներ, տարբեր ոլորտների բարձրակարգ մասնագետներ, հասարակական կարծիքի առաջնորդներ և ամբողջ աշխարհում հայտնի մարդիկ խոսում են ռահվիրա, հեռատես, սոցիալական ձեռներեց ու բարերար Ռուբեն Վարդանյանի բազմակողմանի տաղանդի և մարդկության համար նշանակալի ձեռքբերումների մասին: Այն մարդու, որը հանգամանքների բերումով այսօր Ադրբեջանում կալանքի տակ է:

Այս գիրքն արդարության և Ռուբեն Վարդանյանին ազատելու կոչ է, որպեսզի նա կարողանա շարունակել այն հարյուրավոր նախագծերը, որոնք ուղղված են մարդկանց օգնելուն ու մարդասիրական արժեքներն առաջ մղելու գործին:

ՀՏԴ 929:658
ԳՄԴ 65.29

Գրքի գլխավոր գործընկեր՝
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ
www.ardshinbank.am

Արդշինբանկ

ISBN 978-9939-967-55-4

Владислав Гасумянов, Алина Гасумянова «Рубен!» © Perspectum
Վլադիսլավ Գասումյանով, Ալինա Գասումյանովա, «Ռուբենը» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Perspectum ընկերության հետ կնքած պայմանագրով, որը ներկայացնում է Проект медиа групп հրատարակչական տունը:

Բովանդակություն

Նախաբան 6

Գլուխ առաջին. գործարարը

«Փորձի՛ր սերունդների աչքերով նայել քեզ ու տեսնել, թե ինչ հետք ես թողնում» 8
«Ի՞նչ եմ պատրաստ զոհաբերել հանուն իմ նպատակի» 13
««Տրոյկան» հեռացավ, նրա մշակույթը, սակայն, պահպանվում է...» 19
«Ես ավելի շուտ կատալիզատոր-միակցող եմ, քան պարզապես ձեռներեց...» 23
Իմպակտ ձեռնարկատիրություն 31
«Բոլորս ինչ-որ «նոոդոմյան» քրոմոսոմ ունենք...» 40

Գլուխ երկրորդ. բարերարը

«Ես մեծ երազանք ունեմ...» 48
«Մենք պահպանում ենք մեր ինքնությունը...» 56
«Կրթությունը հետաքրքիր արդյունաբերություն է» 60
«Մարդիկ «ՍԿՈԼԿՈՎՈ» են գալիս ոչ այնքան գիտելիքների, որքան, առաջին հերթին, անոթների շրջապատն ընդլայնելու նպատակով, համայնքի համար. այդ մարդիկ ուսանողներ չեն, գործընկերներ են» 64
«Սա օգնեց փոխել առաջխաղացման իմ ճանապարհն ու ապագայի պատկերացումներս» 68
«Միայն այսպես կարող ենք փրկել աշխարհը...» 71

Գլուխ երրորդ. հայրենասերը

«Ես մնում եմ մեր ժողովրդին հավատացող լավատես» 78
«Բոլորս պիտի մի հարցի պատասխանենք. հայ լինելը կարևո՞ր է մեզ համար» 84
«Այս մրցանակը հայրս պիտի ստանար...» 90
«Մենք ուզում ենք, որ Դիլիջանը ոչ թե պարզապես կովկասյան Դավոս դառնա, այլ առաջ անցնի Դավոսից» 94
«Մենք գիտելիքը փոխարինեցինք դիպլոմներով, բայց մեզ գիտելիք է պետք» 99
«Իմ տեղափոխվելը կապված չէ կուսակցությունների, քաղաքականության, անձնական շահի հետ. այն կապված է գործերի հետ, որոնք 20 տարուց ավելի անում եմ իմ երկրի համար» . . 104
«Մենք անում ենք ամեն հնարավորը՝ հումանիտար ճգնաժամը բացառելու համար» 117
«Մեր ներսում ապրող անտարբերությունն սպանում է ինձ...» 124

Գլուխ չորրորդ. ազատ մարդը

«Ազատությո՛ւն Ռուբեն Վարդանյանին». սա պիտի դառնա մեր ուղենիշերից մեկը 134

Հեղինակների մասին, երախտագիտության խոսք 150

Նախաբան

Այս գրքի նպատակն է հիշեցնել մի մարդու մասին, որի շնորհիվ աշխարհն ավելի բարի դարձավ, հազարավոր մարդկանց կյանքը՝ ավելի բարեկեցիկ:

Այսօր այդ մարդը սատարումի, ազատության և արդարության կարիքն ունի:

Ռուբեն Կառլենի Վարդանյանն իր կարողությունը վաստակել է խելքով, էներգիայով և գործարար հմտությունների շնորհիվ այն հասցրել է ֆորբսյան մակարդակի: Նրա համար կյանքի իմաստն իր հարստությունը մարդկանց ծառայեցնելն է:

Սրանք ամպագոռգոռ բառեր չեն: Ռուբենը շատ է մտածում ապագայի մասին, նա տեսնում է այն, ինչը հասու չէ մեզ. տեսնում է՝ ինչ է սպասվում աշխարհին տասնամյակներ անց, և գործուն կերպով մասնակցում է աշխարհակարգի մարդասիրական հիմքերի կառուցմանը, որի վկաներն ու մասնակիցները կդառնան գալիք սերունդները:

Այդ աշխարհում իշխելու են գիտելիքը և ունակությունները, ոչ թե փողը, հակասությունները լուծվելու են ոչ թե պատերազմների, այլ բանավեճերի ու բանակցությունների միջոցով, կրթությունը, առողջապահությունը և բնապահպանությունն առաջընթացի շարժիչ ուժերն են լինելու, գործարարությունն էլ ընկալվելու է որպես հասարակությանն օգուտ բերող միջոց:

Ի տարբերություն ուտոպիստների, իդեալիստների և երազողների մեծ մասի՝ Ռուբեն Վարդանյանը չի սավառնում ամպերում. նա կարողացել է իր հարյուր հազարավոր համախոհներին վարակել իմպակտ ձեռնարկատիրության* գաղափարներով, որոնք դրված են գիտակցված մարդասիրության արդյունաբերական ռելսերի վրա: Նրանց շարքում հայտնի մարդիկ են՝ Նոբելյան դափնեկիրներ, խոշոր ձեռներեցներ, գիտնականներ և գրողներ, պետական ու մշակութային գործիչներ: Եվ ամենակարևորը. նրանց մեջ շատ են աշխարհի բոլոր երկրների լավագույն, եռանդուն ու մտածող երիտասարդները: Պասիոնարների այդ խաղաղ բանակը Վարդանյանի հետ այսօր արդեն նախադրյալներ է ստեղծում նոր իրականության համար, որտեղ ցավն ու տառապանքն ավելի քիչ են, և ավելի շատ է փոխօգնությունը, բարությունն ու կարեկցանքը: Ռուբենն իր կյանքը կապել է Հայաստանի հետ, որտեղ նրա արմատներն են, որտեղ արարվել է նրա տոհմի դրամատիկ պատմությունը, և Ռուսաստանի հետ, որտեղ նա ներդրումային բիզնեսի և բարեգործության ոլորտում դարձավ պրոֆեսիոնալ ու պրակտիկ անհատ: Երկմիասնական այդ հայրենիքի ապագան նրա համար մշտական և խորը փոխներգործությունն է աշխարհի հետ, դրական գործընթացներին ընդգրկվելն ու հակասությունները խաղաղ ճանապարհով հարթելը:

Ռուբենը խանդավառվում է այս գաղափարներով, սակայն չի պարտադրում դրանք: Նա գերադասում է հասարակական բանավեճ ծավալել երկրների ռազմավարությունների շուրջ՝ լավագույն մտածողներին ներգրավելով դրանց մշակմանը: Ռուբեն Վարդանյանի միակ թշնամին թերևս անտարբերությունն է, անմասնակից լինելը: Նրա համար անտանելի է հասարակությունը, որում դրանք գերակշռում են. այն հավանաբար դատապարտված է դեգրադացման, ինչը հակասում է

---

* Իմպակտ (անգլ.՝ impact), ձեռնարկատիրական գործունեության արդյունքում աշխարհի, մարդկային կյանքի և հասարակական ոլորտի նշանակալիորեն դրական փոփոխությունները (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

այն ամենին, ինչով զբաղվում և հանուն ինչի ապրում է Ռուբեն Վարդանյանը:

Նա Ռուսաստանի և Հայաստանի նվիրյալն է, ջատագովն այն համամարդկային արժեքների, որոնք մեր առօրյայից ջնջում են թշնամանքը, պատերազմը, սպանությունները, բռնությունը: Հենց Ռուսաստանի և Հայաստանի բարգավաճման, առաջընթացի ու հումանիտար փոխակերպման համար է նա ծախսել իր ջանքերի, ժամանակի և միջոցների առյուծի բաժինը: Այնպես ստացվեց, որ Լեռնային Ղարաբաղում նրա ոչ այնքան երկարատև ներկայությունն ավարտվեց ձերբակալությամբ և երկարաժամկետ ազատազրկման սպառնալիքով:

Այս գրքի հեղինակների կոլեկտիվը հավատացած է, որ Ռուբեն Վարդանյանն արժանի է գթասրտության, արդարության և ազատ արձակման:

Ադրբեջանի և Հայաստանի միջև քաղաքական ինչ թնջուկներ էլ լինեին, ինչ կրքեր էլ բորբոքվեին Լեռնային Ղարաբաղի ճակատագրի շուրջ, Ռուբենին առաջ էր մղում միայն մեկ գաղափար՝ պատմության շրջադարձային պահին լինել իր հավատակիցների կողքին և ուժերի ներածին չափ օգնել այդ դժվարությունները հաղթահարելուն:

Ռուբեն Վարդանյանը զինված բախումների սկզբունքային հակառակորդ է, փոխզիջումների մարդ է, բանակցող և հումանիստ:

Մենք ուզում ենք, որ բոլոր նրանք, ովքեր կարող են ազդել Ռուբեն Վարդանյանի ճակատագրի վրա, մեր գիրքը կարդալով՝ լսեն ամենատարբեր երկրների ներկայացուցիչների, մասնագիտությունների, տարիքի, հասարակական դիրք ունեցող մարդկանց բազմաձայն կոչը. «Խնդրում ենք՝ ազա՛տ արձակեք Վարդանյանին, նրան մի՛ զրկեք մարդկանց, երկրներին, մարդկությանն օգնելու հնարավորությունից: Ռուբենը շատ է մաքառել անտարբերության դեմ: Թող, ուրեմն, հաղթանակեն կարեկցանքն ու մարդասիրությունը»:

Վլադիսլավ Գասումյանով

ՌԴ հաղորդակցությունների զարգացման ազգային հեկտազոկական ինստիտուտի տնօրեն

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark